ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2020-2021 ուստարի)

9-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ե՞րբ է տեղի ունեցել Արածանիի ճակատամարտը. 0,5 մ.
   ա) Ք. ա. 69 թ. բ) Ք. ա. 68 թ. գ) Ք. ա. 67 թ. դ) Ք. ա. 66 թ.
2. Վանի թագավորության ո՞ր արքայի օրոք է կառուցվել Թեյշեբաինի (Կարմիր Բլուր) քաղաքը՝
   ա) Սարդուրի I բ) Ռուսա I գ) Ռուսա II դ) Սարդուրի II 0,5 մ.
3. Որտե՞ղ է կառուցվել Տիգրանակերտ մայրաքաղաքը.
   ա) Ծոփք բ) Կոմմագենե գ) Փոքր Հայք դ) Աղձնիք 0,5 մ.
4. Ո՞վ է հաջորդել Տիգրան III-ին. 0,5 մ.
   ա) Արտաշես II բ) Տիգրան IV գ) Արտավազդ III դ) Տիգրան IV և Էրատո
5. Ո՞ր թվականին է կազմվել Արմինիա վարչաքաղաքական միավորը. 0,5 մ.
   ա) 698 թ. բ) 703 թ. գ) 701 թ. դ) 705 թ.
6. Որքա՞ն էր հայ ապստամբական ուժերի դեմ 775 թ. արաբ խալիֆի ուղարկած զորքի թվաքանակը.
   ա) 15000 բ) 20000 գ) 25000 դ) 30000 0,5 մ.
7. Ո՞ր քաղաքում է 1920 թ. հռչակվել Կիլիկիայի ինքնավարությունը. 0,5 մ.
   ա) Ադանա բ) Այնթապ գ) Հաճըն դ) Մարաշ
8. 1921 թ. ե՞րբ է վերահաստատվել խորհրդային իշխանությունը Երևանում. 0,5 մ.
   ա) Փետրվարի 25 բ) Փետրվարի 28 գ) Մարտի 25 դ) Ապրիլի 2
9. Ե՞րբ է գումարվել Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը: 0,5 մ.
10. 1921 թ. գարնանը պետական կառավարման ո՞ր մարմինն է ստեղծվել Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի փոխարեն: 0,5 մ.
11. Ո՞վ է գլխավորել 1920 թ. մայիսին Մոսկվա մեկնած ՀՀ պատվիրակությունը: 0,5 մ.
12. Ո՞ր թվականին է տեղի ունեցել Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Հայաստանի Հանրապետության երկրորդ գումարման խորհրդարանի (պառլամենտի) ձևավորումը
    բ) Պետական համալսարան հիմնելու մասին ՀՀ կառավարության որոշումը
    գ) Արևելքի ժողովուրդների համագումարի հրավիրումը Բաքվում
    դ) Սան Ռեմոյի խորհրդաժողովի գումարումը
    ե) Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակումը
    զ) Հայաստանի խորհրդի առաջին նիստի գումարումը
    է) Հայ-վրացական համաձայնության կայացումը և Լոռին «չեզոք գոտի» հայտարարելը

1	2	3	4	5	6	7

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Խոսրով IV Արշակունի
    2. Վարդան Մամիկոնյան
    3. Վահան Մամիկոնյան
    4. Աբաս թագավոր
    5. Աշոտ I Բագրատունի
    6. Գագիկ I Բագրատունի

1	2	3	4	5	6

    ա. Նիխոր զորավար բ. Անանիա Մոկացի կաթողիկոս
    գ. Բարսեղ (Վասիլ) I դ. Շապուհ III
    ե. Դավիթ Անհողին զ. Սուրեն մարզպան

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա) 1678 թ. Հակոբ Ջուղայեցու գլխավորած պատվիրակությունը հասել է Կոստանդնուպոլիս, որտեղ նույն թվականի վերջերին կաթողիկոսը մահացել է, իսկ պատվիրակության անդամները վերադարձել են Հայաստան:
    բ) 1699 թ. Սիսիանի Անգեղակոթ գյուղում հրավիրվել է գաղտնի խորհրդակցություն, որտեղ որոշվել է լիազորել Իսրայել Օրուն շարունակել բանակցությունները ինչպես եվրոպական երկրների, այնպես էլ Ռուսաստանի հետ:

գ) Վերադառնաով Եվրոպա՝ Իսրայել Օրին Հովհան Վիլհելմին է ներկայացրել 36 կետից բաղկացած մի ծրագիր, որը հայտնի է «Պֆացյան ծրագիր» անվանումով:
դ) Հովհան Վիլհելմը հավանություն է տվել Իսրայել Օրու ծրագրին և առաջարկել գնալ Վենետիկ և Վիեննա՝ նրանց համաձայնությունը ևս ստանալու:
ե) Իսրայել Օրին իր դեսպանական խմբով 1708 թ. ժամանել է Այսրկովկաս, այնուհետև եղել Պարսկաստանի մայրաքաղաք Թեհրանում և վերադարձել Արցախ:
զ) Ռուսաստան վերադառնալիս Օրուն է միացել Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը:
է) 1723 թ. հունիսին թուրքական զորքերը գրավել են Երևանը և շարժվել դեպի Արցախ:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա) Երկրի սահմանների պաշտպանությունը պատշաճ իրականացնելու համար Արտաշես Ի-ը կազմակերպել է չորս սպարապետություններ:
բ) Սարգիս Զաքարյանի մահից հետո հայ-վրացական բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը ստանձնել է նրա ավագ որդին՝ Զաքարեն, իսկ կրտսեր որդին՝ Իվանեն, դարձել է թագաժառանգի խնամակալ՝ ամիրսպասալար:
գ) Կիլիկիայի հյուսիս-արևելքում ընկած էր բարձրաբերձ լեռնաշղթաներով ու ամրակուռ բերդերով պատված Լեռնային Կիլիկիան, որը հայտնի էր նաև Քարուտ Կիլիկիա անունով:
դ) Խնամակալության գործակալության ղեկավարը Կիլիկիայում կոչվում էր պայլ. նա թագավորի առաջին խորհրդականն էր, անչափահաս գահաժառանգի կամ թագավորի դաստիարակն ու խնամակալը:
ե) Կիլիկիայում ազդեցիկ գործակալություն էր արքունի քարտուղարությունը, որի գլխավոր պաշտոնյան կոչվում էր սենեսկալ:
զ) Կիլիկյան բանակի ընդհանուր հրամանատարը սպարապետն էր, որին հաճախ անվանում էին գունդստաբլ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) 1921 թ. մարտի 16-ին ստորագրվել է ռուս-թուրքական պայմանագիր, համաձայն որի թուրք-հայկական սահմանն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով՝ Թուրքիային թողնելով Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը:
բ) Մոսկվայի պայմանագրի համաձայն՝ «Նախիջևանի մարզը»՝ ինքնավար տարածքի կարգավիճակով, փոխանցվում էր Ադրբեջանի խնամակալությանը՝ պայմանով, որ վերջինս դա կարող է զիջել երրորդ պետության միայն պայմանագիրը ստորագրած պետությունների համաձայնությամբ:
գ) Կարսի Անդրկովկաս-Թուրքիա խորհրդաժողովը կայացել է 1921 թ. սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 13-ը:
դ) Կարսի խորհրդաժողովում հայկական պատվիրակությունը, որի նախագահն էր ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանը, առաջ է քաշել միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակները վերադարձնելու, Կողբի աղահանքերը շահագործման վերցնելու և մի շարք այլ հարցեր, սակայն թուրքական պատվիրակությունը որևէ զիջման չի գնացել՝ համառորեն պահանջելով պահպանել 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրի հոդվածները:
ե) Լեռնային Ղարաբաղի խնդիրը քննարկվել է Ռուսաստանի կոմկուսի կովկասյան բյուրոյի կողմից, որի 1921 թ. հուլիսի 4-ի նիստում ընդունվել է արդարացի որոշում Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու մասին:
զ) Հայաստանի խորհրդայնացման մասին Հայհեղկոմի հռչակագրի հաջորդ օրը՝ 1920 թ. նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի Հեղկոմը հանդես է եկել «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի հանրապետության մաս ճանաչելու» հայտարարությամբ:
է) 1922 թ. դեկտեմբերի 10-13-ը Բաքվում հրավիրված Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարում ստեղծվել է Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միությունը:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Սարգիս Զաքարյանի եղբայր Վահրամի որդու՝ Զաքարեի իշխանության կենտրոնը Թմուկ բերդն էր:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն, ինչպես դա արել են Դաշնակից պետությունները:

Թուրքիան և Հայաստանը, ինչպես և բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և ...-ի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնելու ... ...-ի որոշմանը և ընդունելու ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել ... »:

ա. Ո՞ր փաստաթղթից են մեջբերված տողերը:

բ. Ո՞ր վիլայեթի անունն է բաց թողնված մեջբերված տեքստում:

գ. Ո՞ր երկրի որոշմանը և առաջարկություններին պետք է անվերապահորեն համաձայնեին պայմանավորվող կողմերը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

1946-1948 թթ. աշխարհի 12 երկրներից Հայաստան են եկել շուրջ ... (1) հազար հայեր: 1946 թ. հունիսին հայրենադարձների առաջին խումբը «...» (2) շոգենավով ժամանեց Բեյրութ: Հայրենադարձությունը շարունակվեց նաև հետագայում, ընդհուպ մինչև ... թ. (3):

21. Տրամաբանական խնդիր. 1 մ.

Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 7000 տարեկան է, նախնադարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:

բ. Ո՞ր աշխարհն է նրան սահմանակցում գրեթե ամբողջ հարավային երկայնքով:



23. 16-րդ դ. հայ ազատագրական շարժման ո՞ր գործիչն է պատկերված. 0,5 մ.



24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (կարդացե՛ք հակիրճ մեկնաբանությունը և պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)

1915 թ. այս ծաղրանկարից կարելի է հասկանալ, որ պատկերված են հակառակորդ պետությունների զինվորներ: Հեղինակը փորձել է ակնարկել, որ նրանցից մեկը շոշափելի առավելություն ուներ մյուսի նկատմամբ:

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում ձախ կողմում պատկերված նստած զինվորը:

բ. Ո՞ր քաղաքի գրավման հեռանկարն էր գերակշռող կողմը, ի վերջո, նախատեսում ծաղրանկարում:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ե՞րբ է հիմնադրվել Ալեքսանդրիա քաղաքը Եգիպտոսում. 0,5 մ.
   ա) Ք. ա. 334 թ. բ) Ք. ա. 333 թ. գ) Ք. ա. 332 թ. դ) Ք. ա. 330 թ.
2. Մահաթմա Գանդիի ղեկավարությամբ Հնդկաստանի ազգային կոնգրես կուսակցության գործունեության հիմքում դրվել է անգլիացիների դեմ պայքարի նոր մեթոդ՝ 0,5 մ.
   ա) ոչ բռնի դիմադրություն
   բ) խաղաղ և զինված պայքարի զուգակցում
   գ) զինված պայքար միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում
   դ) անգլիական ապրանքների և ծառայությունների բոյկոտ, առանձին դեպքերում նաև՝ դրանց ոչնչացում
3. Ե՞րբ է Իրանում հաստատվել Փահլավիների արքայատոհմը. 0,5 մ.
   ա) 1921 թ. բ) 1923 թ. գ) 1925 թ. դ) 1928 թ.
4. Մինչկոլումբոսյան Ամերիկայի ո՞ր ժողովուրդն ուներ հիերոգլիֆային գիր. 0,5 մ.
   ա) մայաները բ) ինկերը գ) ացտեկները դ) իրոկեզները
5. Միջնադարի ո՞ր պետությունն է դադարել գոյություն ունենալուց 1258 թ.: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1) Թոմաս Ման	ա) Երաժշտություն
2) Մորիս Ռավել	բ) Գրականություն
3) Զիգմունդ Ֆրոյդ (Ֆրեյդ)	գ) Կերպարվեստ
4) Օգյուստ Ռենուար	դ) Հոգեբանություն

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա) 732 թ. Պուատիեի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Կարլոս Մարտելը պարտության է մատնել արաբներին:
   բ) Պիպին Կարճահասակի գահակալումով Ֆրանկական պետությունում հաստատվել է Կարոլինգների արքայատոհմը, որն այդպես է կոչվել Կարլոս Մարտելի անունով:
   գ) 843 թ. Կարլոս Մեծի թոռները Վերդեն քաղաքում դաշնագիր են ստորագրել կայսրության բաժանման վերաբերյալ:
   դ) Վերդենի դաշնագիրը հիմք է դարձել ապագա Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և Պապական պետության կազմավորման համար:
   ե) Լյութերականության և այլ «կեղծ ուսմունքների» դեմ պայքարելու համար 1415 թ. հիմնադրվել է ինկվիզիցիան:
   զ) Հերետիկոսների դեմ պայքարելու համար պապականությունը ստեղծել է նաև Ֆրանցիսկյան, Դոմինիկյան միաբանությունները («մուրացիկ միաբանություններ»):

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
   ա. Վերածննդի գրականության Ֆլորենցիայի 2 ներկայացուցիչ,
   բ. Հյուսիսային Վերածննդի 2 նկարիչ:

9. Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է ընդհանուր գունանշված:

բ. Ո՞ր հանրապետությունն էր նրա կազմում տարածքով երկրորդ ամենամեծը՝ զիջելով միայն Ռուսաստանին:

10. Հին աշխարհի ո՞ր նշանավոր գործչի դրամն է պատկերված ստորև. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

19-րդ դ. սկզբի աշխարհաքաղաքական իրավիճակը ցույց տվող ծաղրանկարում պատկերված գործիչները խորհրդանշում են 2 պետությունների, որոնք բաժանում են աշխարհը միմյանց միջև: Նրանցից աջ կողմում պատկերվածը փորձում է իր կողմը քաշել նոր պատառ՝ Եվրոպան:

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում աջ կողմում պատկերված անձը:

բ. Նշե՛ք այդ պետության ղեկավարի անունը և ազգանունը նշված ժամանակաշրջանում:

գ. Ո՞րն էր նրան ծովում հակազդող երկիրը, որ պատկերված է ձախ կողմի անձի տեսքով:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

10.03.2021 թ.